«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «ՀայաստանիՀանրապետությանՏավուշիմարզիԴիլիջանհամայնքի ևհարակիցտարածքներիզարգացմանևներդրումներիխրախուսմանմասին» ՀայաստանիՀանրապետության 2015 թվականիհունիսի 23-իՀՕ-103-Նօրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդհոդվածի 1-ինմասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Խորհուրդը Դիլիջան համայնքի ղեկավարին տրամադրում է եզրակացություն՝

1) Դիլիջան համայնքի բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ գլխավոր հատակագծերի և քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, դրանց փոփոխությունների, ինչպես նաև նախագծման առաջադրանքների վերաբերյալ.

2) համայնքի զարգացման հնգամյա ծրագրի նախագծի վերաբերյալ.

3) Դիլիջան համայնքի բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության նախագծերի վերաբերյալ.

4) քաղաքաշինական ծրագրային, քաղաքաշինական և այլ փաստաթղթերի վերաբերյալ, որոնց պատվիրատուն է Դիլիջան համայնքը.

5) համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարման, վարձակալության, կառուցապատման, օգտագործման իրավունքով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկներին և վերջիններս համայնքի հեռանկարային զարգացման քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի հետ համապատասխանության վերաբերյալ..

6) քաղաքաշինական զարգացման և կառուցապատման ներդրումային հայեցակարգերի նախագծերի վերաբերյալ.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով համայնքի տարածքում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման, այդ թվում՝ նախագծային առաջադրանքների, կառուցապատման էսքիզների, շինարարության (քանդման) թույլտվությունների, ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի եզրակացությունների և ակտերի վերաբերյալ.

8) տեղական նշանակության ավտոճանապարհներին արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության հայտերի վերաբերյալ.

9) համայնքի բնակավայրերի բարեկարգման և կանաչապատման նախագծերի վերաբերյալ.

10) Դիլիջան քաղաքային բնակավայրի տարածքում ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքների օրինականացման նպատակահարմարության վերաբերյալ: Սույն կետով տրամադրված եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում՝ համայնքի ղեկավարն ընդունում է հիմնավորված որոշում:

Դիլիջան համայնքի հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքների օրինականացման գործառույթներն իրականացվում են բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով՝ պետական կառավարման լիազոր մարմինների հետ համաձայնեցմամբ»:

- Օրենքի 12-րդ հոդվածում.
- 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերնուժընկորցրած ճանաչել:
- 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում «2016» թիվը փոխարինել «2022» թվով,
- 9-րդ մասի 3-ռդկետում«երկու» բառը փոխարինել «չորս» բառով:
- Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: